

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՒՅԷ ԹՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չեռագիրներն եւ չեն դարձուիր,  
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

# ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՉԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԳՐԱՑՔ

Գանձիւրի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	սարեկան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏՕՆԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանգ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՒՅԻ ԿՈՂՄԱՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԻՒԿ Է  
ԵՒ ԹՂՔԱՍԱՐԻ ՍԱՌՔԸ  
ԹԵՐԻՒՆ ՎԱՐՉՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ Է

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ  
ՍԿՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԿԵՆՔԻ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՅՈՒՑՈՒՑԻ  
ՏԻՉ ՏԻՍԱՐ ՍՄԱՐԱՏ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՍՏՈՒՐ  
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի  
ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ ԱՆՎՈՒՅԻ ԿԸ ՆԿԱՏ-  
ՈՒԻՆ:

\* \*

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ԹԱՅ-  
ՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԱԳՐԱՆ  
ՊԵՏ ՏԻՍԱՐ ՍՄԱՐԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐ-  
ՈՒՄՆԷ ՍԿՍԵԱՆ ԴՈՒՄԱՐԵԱՆ Է «ՆՈՐ  
ՕՐ»-Ի ԽՄԱԳՐԱՆՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ  
22 ՍԵՊՏ. 900

\* \*

«Նոր Օր»-ի վարչութիւնը կը խնդրէ  
Արտասահմանի ու կողմասի արգոյ  
բաժանորդներէն որ հաճին պահան-  
ջել երկտողով մը «Նոր Օր»-ի պակաս  
առաջուած թիւերը, որոնք պիտի  
զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր»  
ստացող բոլոր կողմասի հայ թեր-  
թերու ու Հանդէսներու Պատ. Խըմ-  
բազիրներէն որ իրենց հրատարակու-  
թիւնները փոխանակեն «Նոր Օր»-ի  
հետ:

## ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ՄԱՏՈՒՌ ԵՒ Պ, ՄԱՆՔԱՅԵԱՆՑ

Վերջապէս թիֆլիզի համբաւուոր  
Հայն, Պ. Մանթաշեանցն է որ պի-  
տի շինէ հայոց համար մեծածախս  
մատուց մը փարիզի մէջ, հասանա-  
կանաբար Շանգ-էլիզէի հրատարա-  
կին վրայ, փարիզի ամենէն հոչա-  
կաւոր և արժէքաւոր թաղն: Առաջին  
անգամ չէ որ կը լսուի փարիզի Հայ-  
կական մատրան շինութիւնը: Թեր-  
թերը քանիցս խնդրոյ նիւթ ըրին  
ատի, մինչև իսկ զրոյց ելաւ թէ  
Ֆրանսական կառավարութիւնը մտա-  
դիր էր փարիզի մէջ հող շնորհել  
Հայոց մատրան շինութեան համար:  
բայց մինչև ցարդ գործնական ձեռ-  
նարկի մը սկսուած չէր: Այսօր մի-  
այն մէկ անգամ մը, Պ. Մանթաշ-

եանց կը ստանձնէ կատարել այդ  
բարեպաշտական գործն, իւր անձնա-  
նական քսակովը: շէնքին ճարտարա-  
պետական յատակագիծը շինուած է,  
որ պիտի բաղկանայ մատուռէ և ա-  
ռաջնորդարանէ մը: Պ. Մանթաշ-  
եանց տրամադիր է կարելի եղածին  
չափ հոյակապ մատուռ մը կառու-  
ցանելու: փոյթ չէ թէ հազարաւոր  
ոսկիներ պիտի ծախսուին:

Արդարեւ եթէ Շանգ-էլիզէի թա-  
ղին մէջ պիտի շինուի, ուր հողին  
մէջը անշափաւոր սուղ է, կրնանք  
ենթադրել թէ հազարաւոր ոսկիներ  
բաւ գործ մը պիտի ըլլայ դա:

Փարիզի Հայ գաղթականութիւնը  
տարիներէ ի վեր փառապանծ մա-  
տուռ ունենալու մարմնով բորբոքած  
առջի օրէն արդէն հանգանակութեան  
ձեռնարկած էր, որ մի քանի հազար  
Ֆրանքի արդիւնք արտագրած էր:  
գումար մը որով կրնային փարիզի  
հայերը կառուցանել մատուռ մը պարզ  
իրենց թիւին համապատասխան:

Թէպէտ և Պ. Մանթաշեանցի  
նման մեծանուն հայագիւններ տար-  
ուոյն ամեն եղանակին մէջ այցելած  
են ու կ'այցելեն փարիզի այդ հոչա-  
կաւոր քաղաքը, որոյ ափերի մտ  
գնացին ու կ'երթան հիւր ըլլալ ամիս-  
ներով նշանաւոր գերդաստաններ Նու-  
պարի, Երամեանի, Եսայեանի: Բայց  
ատոնցմէ և ոչ մէկունը քով այսպի-  
սի մատրան մը շինութեան առա-  
ջարկը չէր կրցած գտնալ Պ. Ման-  
թաշեանցի այս աւուր քաջալերու-  
թիւնը: Գործը ինքնին նուիրական է.  
ազգն, ի մասնաւորի փարիզի հայ  
գաղութն անհուն երախտիք կը պար-  
տի վեհ բարեբարին որ իւր բարե-  
պաշտ կամքովը կը զգայ թէ ուղիղ  
բարոյականի մը հիմը հաւատքն է,  
թէ նամանաւանդ հայու նման կրօ-  
նասէր ժողովուրդ մը, երբ օտար եր-  
կրի մը ձեռքը ինկած է, իւր տոհ-  
մական բարեպաշտական և ազգասի-  
րական զգացումները կարենալ ան-  
չէջ պահելու համար անհրաժեշտ  
պէտք ունի եկեղեցիի և կամ մատրան  
մը ուր առիթ կ'ունենան միանալու  
ժողովուրդեան բոլոր անգամներն, ամեն  
խաւերէ, ինչպէս որ դպրոցն ու յաւ-  
րանը:

Եթէ յարակից խնդիր մը կայ ո-

րով դրադելու պիտի յանդգնին սոյն  
տողերը, այն է թէ՛ մատուռ մը ո-  
րոյ շինութեանը համար քանի մը  
հարիւր ոսկիներ կրնային բաւել,  
ինչո՞ւ համար ծախսուին հազարաւոր  
լիւրաներ, քանի որ դա պիտի ծա-  
ռայէ իբր աղօթատեղի առ առաւելն  
հարիւր յիսուն հողիներու, (եթէ ա-  
մենքն յաճախեն), ուրկէ միայն կը  
բաղկանայ փարիզի հայ գաղթա-  
կանութիւնը, որոյ եօթնամասունէն ա-  
ւելին համալսարանական և ուսանո-  
ղական կեանքի պատկանողներ են:  
Եթէ փարիզի միջավայրը թոյլտու-  
թիւն ունենար հայոց գաղթականու-  
թեան ապագայ զօրաւոր հոսանք մը  
քարշիւղ դէպ իւր ծոցն, ինչպէս որ  
նոյնը տեսնուեցաւ Պոլսոյ դէպքերուն  
առթիւ Պուլկարիոյ և Երզնկայի մէջ,  
բնական է թէ մեծածախս եկեղեց-  
ւոյ շինութիւնը փափաքելի և մինչև  
իսկ անհրաժեշտ կ'ըլլար:

Ասով չենք համարձակիր երբէք  
բարեբարի մը կամքին դէմ դնել և  
կամ բողոքել, եթէ նա կտակած է իւր  
բաղձանքն: միայն սա զիտել կուտամը  
որ, երբ ժողովուրդն կամ անհատներու  
խումբ մը կը զգայ ունէ բարեգործա-  
կան հաստատութեան մը պէտքը, ու  
կը զիմէ բարեբարի մը որ ստանձնէ  
նորա նիւթական հողը, պէտք է նա  
լնայ որ առաջարկուած ծրագիրն  
որուն վրայ բարեբարն պիտի արտա-  
յայտէ իւր կամքն ու պայմաններն,  
արդիւնաբեր ընէ բարեգործութիւնը:  
որովհետև բարենպաստակ գումար մ'ալ  
պէտք է որ օրինաւորապէս բաշխուի  
Գերմանացի երմտագէտ մը որ իւր  
տնական ծախսերն ելմտացոյցի մը  
համաձայն կը կարգադրէ, կ'ըսէ թէ  
բարեգործական հաստատութիւններն  
ալ իրենց օրինաւոր բաժինն ունին  
և ինչպէս որ իւր ելմտացոյցին մէջ  
մանրամասնօրէն կ'որոշէ իւր ծախ-  
քըն և զանազան պիտոյից համար  
յատկացեալ բաժինն, նոյնը կ'ընէ  
բարեգործականին ենթազմեքթէ ամ-  
սական 30 0/0 սնունդի 10 0/0 վարձ-  
քին և 5 0/0 հանդերձեղէնի եթէ  
որոշուած է իւր առանին կենցաղազա-  
րութիւնը, այլևս սնունդին բաժինը  
ոչ վարձքին տեղ կը գործածէ և ոչ  
ալ վարձքին սնունդի տեղ: հակա-  
ռակ պարագային բաշխումը օրինա-

ւոր ըլլալէ կը դադրի, ու պիտոյք-  
ներէն մէկուն քաջալերութիւն և մի-  
սին զրկանք գործուած կ'ըլլայ: բնա-  
կան է թէ այսպիսի կանոններ երկրին,  
հարուստին ու աղքատին պայմաննե-  
րուն համեմատ քիչ շատ փոփոխու-  
թիւն կրնան կրել: բաւ է որ միտքերը  
լուսաբանելու կրնան ծառայել:

Մեր խօսքը միմիայն փարիզի մատ-  
րան վրայ չէ: դա առիթ տուաւ մեզ  
զիտողութիւն ընել խոնարհաբար մեր  
ազգային բարեբարներուն որ երբ կը  
խարհին բարեգործական նպատակ  
և կամ կտակ մը ազգին, հոգ տա-  
նին որ իրենց բարեգործութիւնը ժա-  
մանակին և միջալայտին պահանջ-  
մանցը համապատասխան ըլլայ: Ու-  
րեմն կը հարցնենք թէ փարիզի մի-  
ջավայրը ուր հազիւ 150 Հայեր կան,  
կը ներքէ արդեօք մեծածախս մատ-  
րան մը շինութիւնը: եթէ միջավայրն  
իսկ ներքէ, ժամանակը չը պիտի  
թոյլ տար: Հայաստան այսօր կը  
պատկերանայ մեր աչքին առջև, իբր  
թշուառ և որբերու ողբերգական  
թատրոն մը: Հայութեան վիճակը  
մի քանի տարուան մէջ տարօրինակ  
կերպիւ կերպարանափոխ եղաւ: մեր  
են այն միացեալ-ընկերութիւնները  
որոց ձայնը կը լսէինք թերթերու,  
թատրոններու, աշխարհի ամեն մէկ  
անկիւնը: ո՞ր են այն դպրոցները  
զոր կը բանային անդադար այդ ան-  
խոնջ ընկերութիւններն: Ասա՛ղ, այ-  
սօր ատոնց յաջորդեցին Որբասիրաց  
ընկերութիւնները որոնք որբանոցներ  
կը բանան, թուրքին ու ֆուրդին  
թիւն ազատած որբերը խնամելու  
համար: ժամանակը փոխուած է:  
ատոր հետ ալ պէտք է փոփոխուին  
բարեգործական նպատակները: Ասկէ  
մի քանի տարիներ առաջ կրնայինք  
չինել հոյակապ եկեղեցիներ: զըպ-  
րոցներ և ըն: այժմ որբերու խնդիրն  
է որ պիտի կազմէ բարեբարներու  
այժմէնուրիւնը:

Չենք ըսեր թէ որբերու խնդիրը  
արդեւք ըլլայ եկեղեցի, դպրոց, լսա-  
րան հիմնելու, որոնք միանգամայն  
պէտք է համընթաց ըլլան: միայն  
թէ քանի որ պիտոյքները շատցան  
ու անակնկալ հողեր եկան դուրս:  
քանի որ Պ. Մանթաշեանցի նման  
բարեբարներն ալ սակաւաթիւ են

մեր մէջ, ջանանք չափաւորել մեր պիտոյքը ու փոխանակ «նօթա-տամ»ի պարզ մատուցմը, փոխանակ «գլխապի» ժողովրդական շատրան մը ունենանք բաւական է, որովհետեւ ասոնց ալ գոյութիւնը անուրանալի կերպիւ կարևոր է. հոն է որ ժողովուրդը պիտի միանայ, հոն պիտի արծարծուի իւր սրտին մէջ ազգասիրական բորբոքն. հոն ատենախօսութեանց տպաւորութեան ներքեւ պիտի բանայ ժողովուրդը իւր քսակը ի նպաստ ուրբեմուն, թերեւ հաւաքուի սեղանին վրայ գումար մը, գորչորս Որբասիրաց ընկերութիւններն՝ իրենց Գործադիր ու Ընդհանուր ժողովներովն, հազիւ մէկ տարուան մէջ կարենան հաւաքել. ահա՛ երկրորդ հարց մը որուն վրայ յառաջիկայ թուով պիտի խօսինք:

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կը լսենք թէ Ազգային խորհրդանան վարժարանի Տեսչութիւնը ինչ ինչ փոփոխութիւններ ներմուծած է վարժարանին դասախօսութեանց ծրագրին մէջ: Այսուհետեւ ֆրանսերէն այբեւանաւ ուսանող, աշակերտներուն, փոխանակ Արաբերէն և կամ Գաղղիերէնի, իրենց մայրենի լեզուով պիտի ուսուցուի:

#### ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ

ՄԱԼԱԹԻՈՅ մէջ հաստատուած է միսիոնարական երկսեռ որբանոց մը որուն մէջ կը դաստիարակուին վաթսուն մանչ և վաթսուն աղջիկ որբեր, երկու հայ-լուսաւորչական և երկու հայ բողոքական խնամակարութեան մը խնամոց յաճուած:

Բացաստի Հայագի բարերար մը, Մալաթիոյ Ս. Լուսաւորիչ վանքին մէջ բացած է որբանոց մը ուր 30 որբեր կը խնամուին. սոյն որբանոցներէն զատ Լատին որբանոց մ'ալ բացուած է որ կը խնամէր 28 երկսեռ որբեր:

ԿՍՄՆՈՅ մէջ հաստատուած Ամերիկեան որբանոցին մէջ պատասպարուած են 30 մանչ և 73 աղջիկ որբեր:

ՎԱՆԱՅ Վարագայ վանքին մէջ, 12 որբեր:

ԿԻՊՐՈՍԻ Կրթարան-Որբանոցի մէջ, 18 որբեր, կուսանին:

ԱՐԱՅԻՐԻ մէջ 16 որբեր:

— Յաւօք կ'իմանանք Տիկին Զենոբ պէյ Մէրամէթեանի մահն, որ պատահած է անցեալ շաբաթ ի Պոլիս:

— Արգոյ ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնարարենք չորրորդ երեսին Սուտանի հանգանակութեան արդիւնքն, ձեռամբ Տիար Ս. Օտապաշեանի:

### ՏԱՐԵՎԱՆ Բ. ՆԻՍՏ

ՀԱՅ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՑՈՒՆ ԸՆԿ. ԵԱՆ  
23 Սեպտեմբեր 1900

(Շարունակութիւն 33րդ. թիւէն)

Ս. Բիւրաս. — Պ. Մըսրէլեան շատ կը սխալի երբ Լսարան-Ընթերցատուն ընկերութիւնը կը շփոթէ բարեգործական ընկերութիւններու հետ, մա-

նաւանդ ներկայ պարագային մէջ, յորում Մայր-Ընկերութենէն բաժնուած են մի քանի անդամներ և նոր Լսարան-Ընթերցատուն անուամբ ընկերութիւն մը ձևացուցած են, նորակազմ և նորահաստատ կոչելով զայն որ օրինաւոր է:

Ա. Կոկանեան. — Այսօր կ'ընդունինք թէ հերձուած մը կայ. Պ. Մըսրէլեան թող յայտնէ թէ սկզբունքով ո՞րը կ'ընդունի:

Սոյն միջոցին Պ. Արտաշէս Մըսրէլեան ուզեց իւր և Տիար Գարագաշի միջև դուրսը տեղի ունեցած անհատական մէկ տեսարանը պարզել և իրեն եղած անարդանքը յայտնել, որով ինքը մեղադրուած էր սոյն ժողովոյն անդամակցելուն համար և միւս կողմանէ կը բողոքէր թէ ինչպէս Տ. Գարագաշ «Պար տը Լ'Աֆրիք» ժողովոյն ներկայ չգտնուելով հանդերձ, կրցած էր հրատարակու բողոքագիր մը ստորագրել իբր ականատես վկայ և կը պնդէր նոյն ժողովոյն օրինաւորութիւնը, ուրից երկու անձերուն մէջ բանակուի մը սկսաւ:

Տ. Գարագաշ կը պնդէր թէ իբր հիմնագիր անդամ իրաւունք ունէր զեղծումներու և ապօրինաւորութեանց դէմ բողոքելու:

Տ. Գալուստեան. — Կը խնդրեմ որ լուսարանուի թէ «Պար տը Լ'Աֆրիք» ժողովը օրինաւոր էր թէ ո՞չ:

Ա. Մըսրէլեան. — Այն պատճառաւ օրինաւոր էր որովհետեւ Մայր-Իււանը ներկայ էր և հրաւեր կարգացած էր Գործ. ժողովոյ. մինչդեռ Գործ. ժողովը չնեղակայացաւ. եթէ իրաւունք ունէին, պէտք էին գալ և ժողովին ապօրինաւորութեան դէմ բողոքել:

Խ. Արշունեան. — Ես իրաւունք չունայի Պ. Մըսրէլեանին եթէ ըսէր թէ օրակարգը ինչ էր. ո՞չ տեղեկագիր, և ո՞չ հաշուեկշիռ ներկայացուած էր. ուրեմն տարեկան ժողովը, եթէ ժողով ըսել պէտք է, ինչ բանի համար գումարուած էր. կարելի է առանց Գործ. ժողովոյ ներկայութեան Ընդհ. ժողով գումարել և առանց անոնց հաշիւները ստանալու, զանոնք հրատարակել և նորեր ընտրել. ըսել է թէ իրենք հակառակութիւն մը ունէին Գործ. ժողովոյ անդամներուն դէմ. ձգենք որ վճարող անդամներէն հազիւ մի քանի հոգիներ ներկայ եղած են, մինչդեռ շատ չվճարողներ կամ նոր անձեր եկած քուէարկութեան մասնակցած են. ահա այդ պատճառներով նոյն օրուան նիստը և ընտրութիւնները օրինաւոր չեն:

Ս. Բիւրաս. — Տ. Մըսրէլեան. թէ ինչ ո՞ւր այն օրը Գործ. ժողովը ներկայ չէ գտնուած. վստահի ըստ հիմնական կանոնագրի տեղեկագիր և հաշուեկշիռ պէտք էին պատրաստուած ըլլալ և այդ տեղեկագրին հետ միասին Գործ. ժողովը պարտաւոր կ'ըլլար իւր հրատարականք մատուցանել. եթէ միմիայն իբր ընդդիմախօս ներկայ գտնուէինք, նոյն օրուան ժողովը վաւերական նկատած պիտի ըլլայինք:

Ա. Մըսրէլեան. — Կրնայիք ներկայ ըլլալ և սոյն ժողովը ապօրինի է ըսելով մեկնել:

Այս փնտրանքութեան միջոցին ունկնդիրներէն Նաչիտ Գալիբեյեան առան անձը անիմաստ խօսքերով սկսաւ ժողովը խանգարել:

Նարախար. — Տասնէհինգ օր առաջուան նիստը առանց խանգարման

տեղի ունեցաւ, մինչդեռ այսօր միօրինակ ընդդիմութեամբ ժողովոյ ժամերը կանչին անօգուտ. լաւ է որ նախօրեւեակի ատենագրութեան ընթերցումը շարունակուի:

Նախագահ. — Այն ունկնդիրները որոնք կաշխատին ժողովը ժամաւաճառ ընել այլ ևս ձայն չը պիտի ունենան:

Նաչիտ Գալիբեյեան նոյն միջոցին դարձեալ խօսք կուզէ և Նախագահը կը մերժէ, հակառակ այս մերժման, Նաչիտ ուզեց խօսքը շարունակել և ի կարգ հրաւիրուեցաւ, բայց նա դարձեալ չանսարով, ժողովականաց նախատական խօսքերը ուղղեց որու վրայ Նախագահը արտաքսեց զինքը ժողովարահէն:

Վերսկսաւ ատենագրութեան ընթերցումը:

Ա. Մըսրէլեան. — Նախօրեւեակի ատենագրութեան մէջ իբր թէ ես «հակառակորդները կը պնդեն» խօսքը գործածած ըլլամ, կը խնդրեմ որ այդ կէտը ուղղուի հետեւեալ բառերով «կամբաստանեն զՏիար Սմբատ Բիւրաս», ինչպէս որ այդ նստին մէջ ըսած եմ:

Այս մասին ուրիշ դիտողութիւն տեղի չունենալով այդ կէտն ալ ընդունուեցաւ:

Ատենագրութեան ընթերցումը աւարտելէ զինի, Նախագահը վերոյիշեալ դիտողութիւններու բարեփոխումով ատենագրութիւնը ձեռամբարձ քուէի ենթարկեց և միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

Յետոյ Նախագահը կարգաց թէ՛ առժամեայ Իււանին հրաւերը առ Տիար Աւետիս Պալեան, ինչպէս որ նախօրեւեակին մէջ որոշուած էր վերջնական դիմում մը ընել ըստ առաջարկի մի քանի անդամաց, և թէ Տ. Աւետիս Պալեանի պատասխանը ուղղեալ առ Մայր-Իււան, որ իւր պարունակութեամբ միմիայն ժողովականաց ծիծաղին և արհամարհանքին արժանացաւ:

Նոյն պահուն մի քանի անդամներու կողմանէ ստորագրեալ գրութիւն մը Իււանին ներկայացուեցաւ նկատողութեան առնուելու խնդրանք. Տ. Նախագահը օրակարգէն շեղել չուզելով գրութիւնը յաջորդ նստի մը թողուց. Տ. Սմբատ Բիւրաս պնդեց որ այդ գրութեան առաջնութիւն տրուի առաջարկելով պարտաւանայ քուէ նախկին Մայր-Իււանի Բ. Ատենագրութիւն դէմ:

Ե. Շիրմանեան. — Կ'առաջարկեմ որ ժողովը այսօր իւր օրակարգով միայն զբաղի և ուրիշ խնդիրներ յետաձգէ:

Տ. Գալուստեան. — Անցեալ նիստին մէջ որոշուած էր հրաւիրել զՏ. Պալեան զալ միանալ, քանի որ մերժած էր մեր հրաւերը, պէտք է ուրեմն մեր տուած գրութիւնը նկատողութեան առնուի. քանի որ Տ. Պալեան կանոնագրի 25-26րդ. յօդուածներու տրամագրութեան տակ կը գտնուի:

Հ. Ազատեան. — Փոխանակ ժամաւաճառ ըլլալու, լաւ է օրակարգին անցնել ու այդ խնդիրներն ալ ուրիշ օրուան յետաձգել:

Նախագահը այս կէտը ժողովոյն քուէին ենթարկելով ժողովը Ծի գէմ

24 ձայնով որոշեց օրակարգին անցնել, յաջորդ նստի մը յետաձգելով վերոյիշեալ խնդիրները:

Ժողովը անցաւ օրակարգի երկրորդ խնդրոյն որ էր, «Տեղեկագիր Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ»:

Տ. Նախագահը իբր անդամ սոյն յանձնաժողովոյ, կարգաց տեղեկագիրը, որու ընթերցման աւարտումէն յետոյ խօսք տուաւ անդամներուն:

Ս. Բիւրաս. — Կուզէի պիտնալ թէ Հաշուեքննիչ յանձնաժողովը ինչ գաղափար կազմած է հաշուոց և հաշուեկշիռի վրայ. պէտք է բացարձակապէս ըսել թէ Գործ. ժողովը զեղծում ըրած է թէ ոչ:

Նախագահ. — Որովհետեւ տոմարները բոլորովին օրինաւորութեան զուրկ և անոնց մէջ արձանագրուած մի քանի հաշիւներն ալ անկանոն եղած են, ուրից յետոյ մնացեալ բոլոր հաշիւներն ցիր ու ցան, կարգ մը թղթի կտորներու վրայ նշանակուած, և գրուած պանի տետրակէ մը քաղուած են, Յանձնախումբս էսպէս կարող չեղաւ ճշդել ներկայացուած հաշիւներն և հետեւեալ չէ կարող իւր վերջնական բառն արտասանել առ այժմ զեղծման մասին:

Տ. Ս. Բիւրաս այս տրուած բացատրութիւններէն ալ գոհ չը մնալով երբ տեղեկագրի լուսարանութիւնը սկսաւ պահանջել, այն ատեն Նախագահը մէջտեղ դրաւ անտրակները. Յանձնաժողովոյն գտած մանրամասն հաշուական սխալները, բաժնեգրիներու հաւաքի տետրակին հետ ունեցած տարբերութիւնները, թատրոնի հաշուոյն մանրամասնութեան չզոյու թիւնը, մանաւանդ նոյն հասոյթին տոմարին մէջ զեղծուելը և փոփոխուելը Յոյց տուաւ ժողովականաց այն գրուած պանի տետրը որ իբր հաշուետուար ծառայած է «Նոր Օր»ի ելից և մոյց և որուն մէջ նշանակուած են «Նոր Օր»ի թերթերու վաճառումները, որոնք ձեռագրական խեղճով աւրուած և վերստին գրուած, և արժեքները չեն համապատասխաներ վաճառուած քանակութեանց ու կարգ մը գումարներ իբր զանազան ծախք նշանակուած, մինչդեռ ուրիշ տեղ մը նշանակուած է նոյն իսկ մէկ զրչի թուղթը և այլն» (Շարունակելի)

### ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Սաշրանաք լրագիրը կը զառանցէ թէ՛ Եւրոպացուց նամանաւանդ Անգլիացուց ու մասամբ իւրք Ասիոյ Հայոց ներկայութիւնը յեզիպտոս, վրնասակար եղած է երկրին շահերուն:

Պաւիթ թերթին մէջ կը կարգանք թէ Պոլսոյ Պարսից դեսպանատունը հեռագիր ուղղած է Գահիրէի Պարսից դեսպանատան, որով կը տեղեկացնէ թէ Պարսից Շահն Պոլսէն վերջը մտադիր է մօտերս այցելել Եզիպտոս:

Կը լսենք թէ անցեալները Մարտի ժամանակ Օսման փաշայ մըտադիր է մօտերս Եզիպտոս գալ, Մահմադ փաշայ Տամատի բով:

Ըստ Մոզաքթաւի, Օսման փաշայ, որդին է Ղալի Օսման փաշայի, որ միանգամայն Սուլթանի փեսան է:

ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆ  
ԱՂԵՔԱՆԳՐՈՅ ԱՉԳԱՅԻՆ ԳՈՐԾԵ-  
ՐՈՒՆ ՎՐԱՑ

(Շարունակութիւն թիւ 35էԹ)

Տ. Ատենապետը ատենադատը բացում է հրո-  
չակիչով, խօսք տուաւ Տ. Ատենապետին՝  
նախորդ նստի ատենագրութիւնը կարգալու-  
համար:

«Ատենագրութեան ընթացքումը տակաւին  
չսկսած՝ Տեառք Լևոն Մկրտիչեան և Ղա-  
զարոս Ատրուսի ձայն բանալով յայտա-  
բարեցին թէ ժողովարարին մէջ «նոր  
անգամներ» կը գտնուին և պահանջեցին որ  
անոնք ևս մասնակցին ժողովոյ, ինչպէս նաև  
բացակայ նոր անդամներու փոխանորդագրերն  
ալ արձանագրութեան տեսարին մէջ ան-  
ցուին»:

«Տ. Ատենապետը ի պատասխանի յայ-  
տարարեց թէ կանոնագրի 12րդ. յօդուածի  
տրամադրութեանց համեմատ, հրաւիրագրեր  
ըրկուած են ամեն անգամ, որոնց անուն-  
ներն ընկերութեան տոմարաց մէջ արձա-  
նագրուած են, որոցմէ գուր գտնուող ան-  
ձանց անկարելի էր նոյնպիսի հրաւերներ  
ուղարկել, և յարեց որ, եթէ կան անձինք  
որք փափաքած ըլլան անգամակցել ընկե-  
րութեան, հրաւիրագրոց ցրուումէն յետոյ  
միջև ժողովոյ գումարման ժամը, այնպիսիք  
յաջորդ ժողովի մը համար միայն կրնան  
ընդունիլ հարկ եղած հրաւերն, եթէ իրենց  
անուններն արձանագրել տան կանխաւ, ըստ  
բնական օրինի, ընկերութեան անգամաց մի-  
ակ ընդհանուր տոմարին մէջ, առանց որոյ  
չեն կրնար անշուշտ անգամ նկատուիլ, և  
ո՛չ, հետևաբար, խորհրդակցութեանց և ո-  
րոշմանց մասնակցութեան իրաւունքը վա-  
յելել ընդհանուր ժողովոյ մէջ»:

«Տ. Լ. Մկրտիչեան առարկեց թէ Տ.  
Ատենապետի յայտարարութեան հակառակ,  
ինքն գիտէր թէ՛ անցեալ նստերու մէջ, եր-  
կու երեք անգամ իւր ընդգիմախօսներու կող-  
մէ յատկապէս բերուած էին միևնոյն օրը  
անգամ գրուած անձեր որք ի գործ դրած  
էին ժողովականի մը ամեն իրաւունքները.  
առանց երեք ղեկավարութեան մը տեղի ունե-  
նալու ժողովոյ կողմէ»:

«Տ. Ատենապետը հաստատեց իր նա-  
խորդ խօսքերը՝ աւելցնելով թէ երեք հրա-  
ւեր ուղղուած չէ անգամ չեղեալ անձերու,  
և ամէն առթի մէջ Դիւանը հրաւիրագրերը  
պատրաստած է կանոնագրով հաստատուած  
պայմանաժամուն մէջ, արձանագրութեան  
յատուկ տոմարին հետևութեամբ գոր ըն-  
դունած է Տնօրէն ժողովը»:

«Տեառք Յովհաննէս Ենորհեան, Լևոն  
Աժտերեան, Եղուարդ Թուրքուհեան, Յով-  
հաննէս Թաշեան, Գրիգոր Խարտեալ և ու-  
րիշներ հետզհետէ խօսելով հերքում տուին  
Տ. Մկրտիչեանի այս վկայութեան, յայ-  
տարարելով թէ երեք տեղի ունեցած չեն  
այնպիսի գործողութիւններ գորս այս վեր-  
ջինը կը յիշատակէ վերագրելով մասնաւոր  
զայն ժողովոյ մեծամասնութեան»:

«Այս առթիւ, Տեառք Թաշեան և Խար-  
տեալ անձնական փորձերով հաստատուած  
գէպքեր յիշելով, վկայեցին թէ երբ առաջին  
անգամ ժողովոյ ներկայացան միևնոյն պատ-  
ճառաւ չէր թոյլատրուած իրենց ժողովակա-  
նի իրաւունքները գործարել և հետևաբար,  
իրև կարգ ունկնդիրներ միայն գտնուած  
էին ժողովարարին մէջ: Ուրիշներ յիշել  
տուին թէ նմանօրինակ պարագայի մը մէջ,  
գարձեալ, շատ յարգելի ներկայութիւն մը  
ժողովականաց մեծագոյն մասին կողմէ, իբր  
անսովոր և անկանոն, անընդունելի նկատ-

ուեցաւ, երբ անցեալ նստի մը մէջ՝ յորում  
գեռ ևս մէկ անգամի մը ներկայութիւնը  
պիտի լաւեր օրինական թիւն ամբողջացը-  
նելու, մի քանի ընկերաց կողմէ նոյն պա-  
հուն հրաւիրուելով եկած բազմած էր Գեր.  
Վահրամ Վ. Աղատեան»:

«Նոյն նստին ներկայ գտնուող բոլոր  
անդամը կը յիշեն անտարակոյս թէ յիշեալ  
պարագային մէջ իսկ՝ բացարձակ կանոնա-  
պահութեան դէմ զարտուղութիւն մը ընելու  
հակառակեցան ժողովականաց ստուարագոյն  
մասը, ընդ որս և ես. ինչ որ սակայն յի-  
շեալ բացառիկ առթիւն մէջ գուցէ կրնար  
շատ արգարանալի ըլլալ, նկատելով մա-  
նաւանդ այն փափուկ հանգամանքն ալ թէ  
Գեր. Վահրամ վարդապետ իրեն կողմ իրն-  
դրանաց անձամբ պատասխանած՝ ինքն իսկ  
յայտարարեց թէ ունիցէ անպատեհութիւն  
չէր տեսնել մասնակցելու ժողովոյ աշխա-  
տութեանը»:

Այս առթիւ, Տ. Մկրտիչեան և իւր հա-  
մախոհը չեն կրնար մոռնալ գէթ սա իրո-  
ղութիւնը թէ երբ ժողովոյ կամքը յայտ-  
նուեցաւ, Գեր. Վահրամ վարդապետ նոյն-  
հետայն մեկնեցաւ ժողովարարէն, յայտ-  
նապէս վշտեցած՝ իրաւամբ:

Վերապահալով Ատենագրութեան բառ  
առ բառ ընդօրինակութեան:

«Տ. Գառնիկ Չպուրջեան, խօսք անկողով  
յարեց թէ՛ նոյն օրուան ժողովն ընկերու-  
թեան 1899 տարեշրջանի ընդհանուր ժո-  
ղովն էր և եթէ նոյն ժամուն բաժանորդ  
անգամը ներկայ կը գտնուէին, Դիւանի  
մասնաւոր հրաւիրագրով եկած էին, զբա-  
ղելու օրակարգին մէջ նշանակուած խնդիր-  
ներով, թէ՛ ընկերութեան անցեալ տարե-  
շրջանի գործողութիւնները, հաշիւներն և տե-  
ղեկագիրներն քննելու և վաւերացնելու ի-  
րաւունքն, այդ տարեշրջանի մէջ անգամ  
եղողներուն, այսինքն դրամ վճարողաց մի-  
միայն կը պատկանէր բացարձակօրէն: Հե-  
տևաբար զարմանք յայտնեց որ ընկերու-  
թեան մինչև նոյն օրը բոլորովին օտար ան-  
ձինք կը համարձակէին այդ օրուան ժող-  
ովոյ մէջ բաժանորդագրուելու իրենց իրաւա-  
տութեանն և գիտակցութեանն դուրս խնդիր-  
ներու միջամուկ ըլլալու կանխամիտ նպա-  
տակաւ»:

«Տ. Չպուրջեան յարեց նաև թէ ընկե-  
րութեան մը տարեկան ընդհանուր ժողովը  
նախապէս ըստ կանոնագրութեան տրամադ-  
րութեանց գծեալ խնդիրներով միայն կրնար  
զբաղիլ, և թէ առաջին անգամն էր որ կը  
տեսնէր անգամակցելու պատրուակաւ ներ-  
կայացող խումբի մը ընկերութեան ժողովա-  
արհը գալ և ընդհատել ու արգիլել նորս  
գործառնութիւնները: Ուստի, բողոքելով այդ  
միջամտութեան դէմ պահանջեց որ անմի-  
ջապէս օրակարգի խնդրոց անցուի, և ըն-  
կերութեան կանոնագրութեան տրամադրու-  
թեանց դէմ զեղծում չգործուի»:

«Տ. Լևոն Մկրտիչեանի յառաջ բերած  
հիմանց վրայ և առանց այլ ևս յարգելու  
Դիւանէն խօսք խնդրելու կանոնը, տեսակ  
տեսակ ձայներ սկսան բարձրանալ սրահին  
ամեն կողմերէն խառն ի խառն, այնպէս որ  
Դիւանին նիւթապէս անկորելի կ'ըլլար իւր  
ձայնը լսելի ընել կարգապահութիւնը յար-  
գել տալու համար»:

«Այս միջոցին Տ. Միհրան Գալֆայեան  
ոտք ելլելով զգաստութեան ազդու հրաւեր  
մը ուղղեց ներկայից մէկ մասին, զիտեղ  
տալով անոնց թէ ժողովարարէ մը խիստ  
տարբեր տեղի մը հազիւ կրնար պատշաճի  
այս աստիճան խանդավառանք գոռում գո-  
չում, և յորդորելով զանոնք գէթ յարգել  
այն պատկառելի յարկը ուր կը գտնուին»:

«Տ. Չպուրջեան Սըվազը ցաւ յայտնելով

տեղի ունեցած անկարգութեանց համար,  
առաջարկեց որ ժողովը յետագոյի երկու  
շաբաթ, և այն ատեն ամեն նոր անգամ  
ներ հրաւիրուին մասնակցութեան, ըստ կա-  
նոնագրի»:

«Այս գործնական դադարին ևս ար-  
ձագանգ չգտաւ հակաճառութեանց շփոթու-  
թեան մէջ»:

«Խօսք տուաւ Տ. Յովհաննէս Մուրաֆ-  
եանց, որ հազիւ թէ սրահէն ներս մտած  
էր, և երթաղորդի իսկ վայրիեան մը թէ  
նախորդ առթիւ երկու երեք անձինք, իբրև  
նոր անգամներ բերուած ըլլան ժողովոյ մաս-  
նակցութեան, ինչ որ նոյն ինքն Տ. Լևոն  
Մկրտիչեան և համախոհը չեն ըսեր թէ  
կանոնաւոր և օրինաւոր գործ մըն էր, զար-  
մանք յայտնեց թէ ինչպէս իրենք կուզան  
հիմայ այնչափ բուն կերպով պահանջելու  
միևնոյն անկարգութեան թոյլտուութիւնը  
երեսուն քառասուն անձերու համար: Եւ  
այս անձերու կանխապատրաստեալ և նպա-  
տակաւոր վարմունքը դառնապէս դատա-  
պարտեց իբրև ընկերութեան համար փա-  
սաբեր և անգամաց համար ամօթալի ա-  
բարք մը»:

«Հակառակ այս բոլոր ջանքերուն, ժո-  
րը կը շարունակուէր: Գլխաւորապէս Տեառք  
Տօգլ. Ժամկոչեան, Կարապետ Ժամկոչեան,  
Կոստան Օհանեան, Ղազարոս Ատրուսի և  
Լևոն Մկրտիչեան ինչպէս նաև մի քանի ու-  
րիշներ (առանց հաշուելու և անուանելու  
իրք նոր անգամ ներկայացուող շատ մը  
մարդիկ, ընդ որս ամենախոնարհ դասա-  
կարգի գործաւորներ, դրասնեակներու և  
տուններու հասարակ սպասարներ, կն.,  
կն., որք ընդհանրապէս ակամայ հոն բեր-  
ուած և ստիպել իրենց հրամանատարնե-  
րու ձայները և շարժումները կը կրկնէին,  
իրենց ներգործուած բացառիկ եռանդով և  
համարձակութեամբ մը), կը շարունակէին  
իրենց բոլոր ուժովն և կողորդալի բարբա-  
ւանօք խեղդել յանուն օրինաց և յանուն  
կարգապահութեան արտասանուած թէ՛ Դի-  
ւանին և թէ ժողովականաց մեծամասնու-  
թեան խօսքերը»:

«Տ. Ատենապետը կրկին և կրկին իւր  
յորդորները կը ցրուէր ի գուր, և նոյն իսկ  
յանդիմանութիւններ կ'ուղղէր ալ ու ձախ,  
առ Դիւանին պարս ու պատշաճ յարգանքի  
դէմ գործուած այս ծայրայեղ զանցառու-  
թեանց համար և կը հրաւիրէր ժողովարգել  
խմբակը՝ թոյլ տալ գոնէ որ օրակարգին  
վերագրուէին, և այնուհետև յայտնել իրենց  
բոլոր փափաքները կամ առաջարկութիւն-  
ները, կարգի, կանոնի և հանդարտութեան  
անհրաժեշտ պայմանները յարգելով»:

«Մրահին ամեն կողմերէ օրակարգը կը  
պահանջուէր, բայց դարձեալ միևնոյն ան-  
գամաց փոքր խմբակի մը առաջնորդութեամբ  
և օտարաց ստուար խմբի մը մասնակցու-  
թեամբ սնուցուած արտասովոր աղմուկը կը  
խափանէր ամէն լուրջ և օրինաւոր ձայն»:

«Տ. Յովհաննէս Ենորհեան, Ատենա-  
պետ Տնօրէն ժողովոյ, կողում ընելով  
Դիւանին իշխանութեանը՝ օրէնքը և կա-  
նոնը յարգել տալու մասին, և ժողովա-  
կանաց պարտականութեանը՝ մասնաւոր  
կարգապահութեան մասին Դիւանին կողմէ  
եղած ազդարարութեանց հնազանդելու, պա-  
հանջեց Տ. Ատենապետէն թոյլ շտալ որ  
օրակարգի կարևոր և ստիպողական խնդիր-  
ները զգուշիւ արտաքոյ օրակարգի ապօրի-  
նաւոր և անվայելուչ կերպով յարուցուած  
միջադեպի մը որ երկարօրէն ժամապահառ  
կ'ընէր ժողովը»:

«Հանդարտութիւնը դէժ մասամբ ապահո-  
վելու համար, Տ. Ենորհեան առաջարկեց Դի-

ւանին որ նախ և առաջ ներկաներէն անոնք  
որ անգամ չեն բաժնուին անգամներէն և  
իբր պարզ ունկնդիր միայն կարենան մնալ  
հոն, իրենց դիրքին պահանջած վարմունքը  
յարգելու պայմանաւ»:

«Տ. Ենորհեան յայտարարեց ժողովին  
թէ. Տնօրէն ժողովն իր պաշտօնի լրմանն  
առթիւ, ինչպէս ծանուցուած է օրակարգին  
մէջ, բերած ըլլալով իւր գործառնութեանց  
տարեկան ընդհանուր տեղեկագիրներն, հա-  
շիւներն և յաջորդ տարուոյ երկնորից ծրա-  
գիրն, անձկանօք կը պահանջէ անոնց յա-  
տենի ժողովոյ ունկնդրութիւնը և վաւերա-  
ցումը, և իւր օրինաւոր յաջորդին ընտրու-  
թիւնը, սրպէս փոխանցէ նմա իւր պաշ-  
տօնին յարակից ամեն իրերն և պարտա-  
կանութիւններն, և յարեց թէ Տնօրէն ժո-  
ղովն ստիպուած կգգար ինքզինքը հանդի-  
սաւորապէս յայտարարելու թէ՛ պիտի մեր-  
ժէ ունիցէ պատասխանատուութիւն, եթէ ժո-  
ղովն իր օրինօք գծեալ պարտականութիւնը  
չկատարէ հանդէպ Տնօրէն ժողովոյ, նորս  
ներկայացուցած համարտուութիւնը լսելով  
և իր վճիռը տալով անոր մասին»:

Ընդգիմախօս անգամներ մի քանին, օրոց  
կ'ընկերանար դարձեալ օտարական բազմու-  
թիւնը, ոտքի վրայ կանգնած, և շարունա-  
կելով անաստեղ Դիւանի յորդորանաց և  
մինչև իսկ ըրած սպառնալեաց թէ պիտի  
ստիպուի վերջապէս ատենը փակել, բար-  
ձրագոյ ազդակներով կը ջանային խափա-  
նել Տնօրէն ժողովոյ Ատենապետին խօսքե-  
րը, անոր դէմ ուղղելով բուն իրերով և  
ատեղութեամբ արտասանած բացազանցու-  
թիւնները»:

«Նոյն միջոցին Տ. Կարապետ Ժամկոչ-  
եան, Տ. Ենորհեանի երեսին աղաղակեց  
թէ՛ Տնօրէն ժողովն որ նոր անգամաց բաժ-  
նեկները գանձած էր արդէն, կ'ուրանար  
զայն արպէսի չ'ընդունի անոնց ժողովի մաս-  
նակցութեան իրաւունքը»:

«Այս անգամ համարձակութեամբ մը ար-  
տասանուած ծանր ամբաստանութեան առև  
Տ. Ենորհեան յայտարարեց թէ՛ «Մուտ է»  
և խափա կշտամբեց յիշեալն որ համար-  
ձակած էր անպատուել Տնօրէն ժողովն, մա-  
բաստանելով զայն թէ՛ ընկերութեան գան-  
ձը մտած գումարի մը գոյութիւնը կ'ուրա-  
նար»:

«Այս ցաւալի դէպքին վրայ, աղմուկ-  
ներն աւելի ևս օսաստիպան և Տեառք Մը-  
կրտիչեան, Ժամկոչեան, Օհանեան, Ատ-  
րուսի կն., կն., ոմանք ձեռքի հարուած-  
ներով Դիւանին սեղանին վրայ և ամենքն  
ալ ահագնագոյ պոռուցներով թո՛հ ու  
բո՛հը յետին երկակայելի համեմատութեանց  
հասցուցին, օգնութեան կողմով վերադառնալ  
նորեկները, որոնց ժամանակ ժամանակ  
հրահանգ կուտային աղմկայեղ ցոյցեր ը-  
նելու»:

«Ժամանակը կը յառաջանար և ունիցէ  
խրաւատական և օրինական միջոցներ գորս  
կ'սպառէր Դիւանը, անկարող կը մնային  
զգաստութեան հրաւերները լսելի ընել, հե-  
տևաբար, վերջին ազդարարութիւն մը ևս  
տեղի ունեցաւ Դիւանին կողմէ և երբ զար-  
ձեալ այս եպիբրելի արարքները և գոռում  
գոչումները վերջ չէին գտներ, Ընդհ. ժող-  
ովոյ Ա. Ատենապետը ոտք ելլելով և հնչե-  
ցնելով վերջին զանգակը, ըսաւ թէ՛ տիրող  
անօրինակ միանգամայն ամօթալի և անուղ-  
ղայ անկարգութեանց և ժողովին մէջ զբ-  
բաղարար աններկի էր այլ ևս յուսալ թէ  
կարելի պիտի ըլլայ ժողովոյն իւր աշխա-  
տութիւններով զբաղիլ, մասնաւորապէս որ կը  
օրն ալ արդէն անցած էր: Հետևաբար, հան-  
դիսաւորապէս յայտարարեց թէ Ասեանը  
փակուած է, օրակարգի խնդրոց ամբող-  
ջութիւնը մնալով ուրիշ օր գումարելի ժող-  
ովոյ մը նկատմամբ, որոյ վրայ ժողովա-  
կանները ինչպէս և Դիւանը մեկնեցան ժո-  
ղովարարէն»:

Թ. Յ. ԵՆՈՐԻՉԵԱՆ

(Շարունակութիւնը տես յաջորդող  
«Նոր Օր»-ի որ պիտի երևի երկու-  
շաբթի առաւօտ):

ՆԱՄԱԿ ՍՈՒՏԱՆԷՆ

Վախի Հայֆա 24 Սեպտ.

Պատ. վարչութիւն «Նոր-Օր» Լրագրոյ Գահիրէ

Շնորհակալութիւն յայտնելով «Նոր Օր» ի այն բաշխարական խօսքերուն համար զոր ըրած էր մեր որբասիրական ձեռնարկին ծանուցման առթիւ, կը փութանք այսօր զրկել առաջին հանգանակութեան մը համեատ արդիւնքը, նուիրատուներու անուններով մէկտեղ, խնդրելով որ բարեհաճիք զայն հիւրընկալել հանրագուտ օտկանիդ մէջ, ի գիտութիւն և ի բաշխարակուն ամէն որբասէր ընթերցողաց:

Table with 2 columns: Name and Amount. Includes items like 'ԱՆՈՒՆԱՔ ՆՈՒՐԱՏՈՒՅ' 702, 072, 'Անունն ոմն (լորտիմը զասակ)' 400, 'Ժօրժ Հոկայեան' 97 20, 'Կարապետ Խաչատուր' 97 20, 'Ասօրժ Եաֆէր, գերմանացի' 60, 'Լիուկ Զվրնս գեղապետ' 50, 'Նակիւյ Բաթիպա' 50, 'Ճիւ' 50, 'Ս. Տէննըժ' 50, 'Ա. Կորսոն' 50, 'Հէնրի Լայֆօր' 50, 'Օմար Ֆախրի' 50, 'Թակոր Հէքիմեան Ասուան' 50, 'Աւետիս Գլըգճեան' 50, 'Տը. Ասատ Բաշիա Հալֆա' 50, 'Կրետուցի Թուրք հարիւրապետ մը' 50, 'Ֆորտ' 48 20, 'Միրիճեան Եսայեան հիմայ Նակ Համատի' 45, 'Ս. Մաշայանի Հարֆա' 40, 'Դաւիթ Չիմանեան հիմայ Գահիրէ' 30, 'Տը. Իպրահիմ Ֆէհմի Հալֆա' 30, 'Տը. Ալի Հուանի' 30, 'Սարգիս Ստեփան Հաֆիր Բէրմա' 20, 'Բաղաբակրթեալ Սուտանցի մը Հալֆա' 20, 'Խրիսթօ Փարմա' 20, 'Իսրայէլացի մը Ասուան' 20, 'Ժօրժ Ֆրանքօփոլո' 20, 'Հեռագրատան պաշտօնեայր Մուհամմէտ Նակաթի Հալֆա' 20, 'Ամին Եուսուֆ' 15, 'Սապա Պուլժո' 10, 'Որբասէր' 10, 'Հապիպ Աթալա' 5, 'Մուհամմէտ Թահա' 5, 'Հաննա Սամի Հալֆա' 10, 'Հասանէն Լուիֆի հարիւրապետ' 15, 'Մուհամմէտ Ալի' 5, 'Գումար' 1724, 'Ս. Օ.' (Շարուճակելի)

Le Gérant J. MUNIER  
Տպա. «Միւրիւն».— Թ. Ս. Փափագեանի

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ

Ապիւն Պապ-էլ-Պոսթան Հրատարակից վրայ և Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը ՕՀԱՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ ԴԱՆԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղասէր մը կարենայ անցընել հաճոյալի ժամանց մը: Ապտինի ընդարձակ հրատարակիչ զովագին օղբ, վայրին սքանչելի դիրքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը, այս ամէն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԲՅՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամէն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը: Ամէն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միզերէ օշարակ ամենէն գլոխուարահաճներն անգամ պիտի գոհման եփրասեն:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԱ. ԳՈՉԱՆՃԵԱՆ  
Շարա Ապու-Սապան  
Նիեու-Տիվիբուի դեղարանին դիմացը:  
Օղատուն ու զուարճալի դիւր. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու անդարար կերակուրներու զանազանութիւնն, անխաղախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը:  
Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գառնայ հայկական ճաշարանին:

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալին ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրատարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութենէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամէն տեսակ դրամական և ֆուտի ֆոնտայի, վիւտը Բարիի գործողութիւններ, գանձումներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեկիցի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւ պաուի վրայ փաստարան Ռաբլաքիի գրասենեակը:

ՉՈՒԼԻԶ-ՄԵԳԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԱՐԱՐԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ  
Ս. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

Կը ձուլեն, կը շինեն երկաթէ ու արդյոք զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն., յաճախորդները գոհացնող պայմաններով:

Ա Ձ Դ

Ազգային Գալտեան վարժարանի համար Օգնական - Ուսուցչուհի մը պէտք ըլլալով, փափաքողք կրնան դիմել վարժարան և բանակցել Տնօրինութեան հետ:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ  
Գալտեան երկու վարժարանի

ՊԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ  
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿԱՆՑ  
ԵՒ ՁԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ  
Ապիւնի մեծ պողոտային վրայ Տայիւայի Սանիթի դիմացը, նախկին Ելեկտրական գործիներու շաքառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս Եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ դիմող Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելադրուած մէթոտով, Մանրամանութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ախտայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազբատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՏՊԱՐԱՆ  
ՄԻՒՆԻԵՐ  
Ի ԳԱՀԻՐԷ  
Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՍՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ  
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորներ, մահազդեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադիրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.:  
Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամօք և ճաշակաւոր սպազմութեամբ:  
ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ